

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1Ժ -14

«Երևանի Ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի,
կայացած 2014թ. փետրվարի 28-ին, ժամը 16- 00

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին **մասնակցեցին՝**

Ընկերության տեղաբաշխված 10.348.896 բաժնետոմսերի սեփականատերերից ներկա են 7 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք հադիսանում են 8.300.073 բաժնետոմսերի սեփականատերեր (80,2%), այդ թվում Ընկերության 8279117 բաժնեմասի սեփականատեր ՀՀ էկոնոմիկայի նախարարության (80.2%) լիազոր ներկայացուցիչ **Արա Պետրոսյանը:**

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ **Արա Պետրոսյանը**, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց՝ Ղազարյան Գայանե, ժամհարյան Արմինե, Ներսիսյան Արշալույս:
Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ`

1. Ընկերության տնօրենների խորհրդի նոր կազմի հաստատում:
2. Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական կազմակերպության հաստատում:
3. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցում և կանոնադրությունում համապատասխան փոփոխությունների հաստատում:

Բաց քվեարկությամբ ժողովին ներկայացված օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1. հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Ընկերության խորհրդի նախագահ Արա Պետրոսյանը: Նա առաջարկեց որպես պետական բաժնեմասի լիազոր ներկայացուցիչներ Գագիկ Աղաջանյանի և Սեյրան Սուվարյանի փոխարեն Ռաֆիկ Բաղդասարյանի և Արմեն Եզանյանի թեկնածությունները և հաստատել Ընկերության խորհրուրդը հետևյալ կազմով`

1. Արա Պետրոսյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Ռաֆիկ Բաղդասարյան
4. Արմեն Եզանյան

5. Էդուկարդ Մաթևոսյան

Ձեկուցողը սպառնիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ 8.300,073 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Ընկերության տնօրենների խորհուրդը հետևյալ կազմով.

1. Արա Պետրոսյան
2. Էմիլ Գրիգորյան
5. Ռաֆիկ Բաղդասարյան
6. Արմեն Եզանյան
5. Էդուկարդ Մաթևոսյան

Օրակարգի 2, հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի անդամ Է. Մաթևոսյանը՝ Նա նշեց, որ Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացման կապակցությամբ ստացվել է երկու հայտ՝

«ՊՐՈԳՐԵՍ - ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ -ն և «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ն կողմից: Նա առաջարկեց հաստատել «ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ը, հաշվի առնելով նրա կողմից ներկայացված ավելի ընդունելի ֆինանսական պայմանները և միաժամանակ պահանջվող մասնագիտական մակարդակի ապահովումը:

Ձեկուցողը սպառնիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ 8.300.073 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Որպես «Երևանի Ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված կազմակերպություն հաստատել «ՊՐՈԳՐԵՍ - ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ:

Օրակարգի 3, հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր տնօրեն Գ.Կաֆյանը:

Նա տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության , 28.02.2013թ. N 241- Ա « «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին » որոշման համաձայն

Ընկերության 29,04,2013թ. արտահերթ ընդհանուր ժողովի կողմից կատարված փոփոխությունները չեն գրանցվել արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի և Հաշվի օպերատորի կողմից, Ընկերության կանոնադրական կապիտալի և բաժնետոմսերի անվանական արժեքի հանրագումարի անհամապատասխանության պատճառով և առաջարկվել է կատարել ճշգրտում:

Գրանցումն ապահովելու համար առաջարկվում է Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 4,126,622,280 ՀՀ դրամ , իսկ մեկ բաժնետոմսի անվանական արժեքը սահմանել 398,75 , կատարելով համապատասխան փոփոխություններ Ընկերության կանոնադրությունում: Ձեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված հարցերին:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ 8.000.073 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.02.2013թ. N 241- Ա « «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին » որոշումը, բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու միջոցով, Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 4,126,622,280 ՀՀ դրամ:

Ընկերության կանոնադրության 5-րդ կետի 5.2 ենթակետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ « 5.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4,126,622,280 (չորս միլիարդ հարյուր քսանվեց միլիոն վեց հարյուր քսաներկու հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը կազմում է 10.348.896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 398,75 (երեք հարյուր իննսուներեք դրամ յոթանասունհինգ լումա):

Բոլոր 10.348.896 հատ սովորական անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսերը (ընկերության կողմից տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերի 80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (ընկերության կողմից տեղաբաշխված բոլոր բաժնետոմսերի 20 տոկոս) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին»:

Ընկերության կանոնադրության 1-ին կետի 1.1 ենթակետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝ «Ընկերության պետական բաժնեմասի հիմնադիր հանդիսացող

պետական կառավարման լիազորված մարմինն է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը»:

Ժողովի օրակարգը սպառվեց և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ՝

Ա. Պետրոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Օ. Ամիրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1 Խ-14

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

07.02. 2014թ.

Ներկա են՝

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների
խորհրդի Նախագահ՝ Արա Պետրոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավոր
խորհրդական,

Անդամներ՝ Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնունոն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն
Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրավաբան

Հրավիրված՝ Գագիկ Կաֆյան - « ԵՈԳ » ԲԲԸ Գլխավոր տնօրեն:

ՕՐԱԿԱՐԳ՝

1.«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ արտահերթ ընդհանուր ժողովի հրավիրում
և արտահերթ ժողովի օրակարգի հաստատում:

Որոշեցին՝

1. Ընկերության բաժնետերերի 2013 թվականի արտահերթ ընդհանուր ժողովը
հրավիրել 2014 թվականի փետրվարի 27-ին, ժամը 16.00, ք.Երևան , Արշակունյանց 12
հասցեում:

2. Հաստատել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ
օրակարգը՝

1) Ընկերության տնօրենների խորհրդի նոր կազմի հաստատում:

2) Ընկերության 2013 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ
անցկացնող մասնագիտացված աուդիտորական կազմակերպության հաստատում:

3) Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում և կանոնադրությունում
համապատասխան փոփոխությունների հաստատում:

Խորհրդի Նախագահ՝

Անդամներ՝

Արա Պետրոսյան

Էմիլ Գրիգորյան

Էդուարդ Մաթևոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.02.14թ. արտահերթ ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 7 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10.348.896 հատ / հանդիսանում են 8.300.073 բաժնետոմսի սեփականատեր,
կամ ժողովին ներկա էին 80,2 % ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Ա. Ներսիսյան

Գ . Ղազարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.02.14թ արտահերթ ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.՝ (առկա 8.300.073.ձայների քանակից)

ՀԱՐՑ 1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության՝
ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլատիվ) ձևով
բաժնետերերը իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

1. Արա Պետրոսյան	կողմ՝	8.300.073
2. Էմիլ Գրիգորյան	կողմ՝	8.300.073
3. Ռաֆիկ Բաղդասարյան	կողմ՝	8.300.073
4. Արմեն Եզանյան	կողմ՝	8.300.073
5. Էդուարդ Մաթևոսյան	կողմ՝	8.300.073

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.

1. Արա Պետրոսյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Ռաֆիկ Բաղդասարյան
4. Արմեն Եզանյան
5. Էդուարդ Մաթևոսյան

ՀԱՐՑ 2. « Ընկերության 2013թ. ֆինանստնտեսական գործունեության աուդիտ անցկացնող
մասնագիտացված աուդիտորական կազմակերպության հաստատում.

կողմ - 8.300.073 դեմ - 0 ձեռնպահ - 0

«ՊՐՈԳՐԵՍ - ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ -ը որպես «Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված կազմակերպության հաստատվեց:

ՀԱՐՑ 3.«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցման և կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ հաստատումը:

կողմ - 8.300.073 դեմ - 0 ձեռնպահ - 0

«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցման և կանոնադրությունում համապատասխան փոփոխությունները հաստատվեց:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Ա. Ներսիսյան

Գ . Ղազարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի 28.02.14թ արտահերթ ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 7 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.300.073 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 80,2% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի առաջին 3 հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1.կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Արա Պետրոսյան	կողմ՝	8.310.703
2. Էմիլ Գրիգորյան	կողմ՝	8.310.703
3.Ռաֆիկ Բաղդասարյան	կողմ՝	8.310.703
4. Արմեն Եգանյան	կողմ՝	8.310.703
5 Էդուարդ Սաթևոսյան	կողմ՝	8.310.703
2. կետ	կողմ՝	8.310.703
3. կետ	կողմ՝	8.310.703

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ժամհարյան

Ա. Ներսիսյան

Գ . Ղազարյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

«Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը 1Խ-14
07.02.14թ.
տնօրենների խորհրդի նախագահ
Ա. Պետրոսյան

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտահերթ ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

28 փետրվարի 2014թ.

1. Ընկերության տնօրենների խորհրդի նոր կազմի հաստատում:
2. Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ
անցկացնող մասնագիտացված աուդիտորական կազմակերպության
հաստատում:
3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալի
նվազեցում և կանոնադրությունում համապատասխան փոփոխությունների
հաստատումը:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Ուշտոնը	Լ.բաժնետոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1	Արա Պետրոսյան	1960	ՀՀ	ճարտարագետ շինարար	Էկոնոմիկայի նախարարի իշխավոր խորհրդական	Չունի
2	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ»ԲԲԸ Գլխավոր տնօրեն	5894
3	Էդուարդ Մաթևոսյան	1945	ՀՀ	իրավաբան	«ԵՈԳ»ԲԲԸ, Իրավաբան	7764
4	Ռաֆիկ Բաղդասարյան	1955	ՀՀ	տնտեսագետ	ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչության պետ	Չունի
5	Արմեն Եգանյան	1973	ՀՀ	տնտեսագետ	ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչության պետ	Չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 28փետրվարի 2014թ
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. Ընկերության տնօրենների խորհրդի նոր կազմի հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՉԵՈՆՊԱՀ

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

Արա Պետրոսյան	ձայն
Էմիլ Գրիգորյան	ձայն
Էդուարդ Մաթևոսյան	ձայն
Ռաֆիկ Բաղդասարյան	ձայն
Արմեն Եգանյան	ձայն

ՀԱՐՑ 2. « Ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորական կազմակերպության հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՉԵՈՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցման և կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ հաստատումը

ԿՈՂՄ ԴԵՄ ՉԵՈՆՊԱՀ

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

